ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունիսի 2022 թվականի N 197-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 2-ի N 32-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ և 7-րդ կետերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2021 թվականի փետրվարի 09-ի N 50-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել *2022 թվականի հունիսի 17-ին (ժամը 11^{00}-ին)* Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթն անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝

1) ***Վասակ Վարդանյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ,

2) ***Ստեփան Բաղդասարյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի օգնական,

3) ***Մանվել Պետրոսյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ,

4) ***Մարի Բալյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության խորհրդական,

5) ***Հասմիկ Հակոբյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քարտուղարության պետ,

6) ***Արմեն Վարդանյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ,

7) ***Վահագն Նազլոյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի պետ:

2. Հանձնաժողովի նախագահ նշանակել՝ ***Վ. Վարդանյանին***, քարտուղար՝ ***Վ. Նազլոյանին***:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2022 թվականի հունիսի 16
ք. Հրազդան